

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Անցվորականք ու շունը

Իրիկնադեմին մեկ ղրաղ քուչով
Երկու մարդ իրար հետ զրից տալով՝
Անց էին կենում, մեկ էլ էն տեսան,
Դռան շեմի տակիցն մեկ շուն հենց բիրդան
Ծղրդաց, իսկույն վնգվնգալ սկսեց:
Էս ձենի վրա սաղ քուչեն լցվեց.
Հիսունից ավել՝ շներ մոտ էլան,
Մեր անցվորների գլուխը տարան:
Մեկը կռացավ՝ որ քար վերցնի,
Մյուսը ձեռիցն բռնեց ընկերի,
«Սի՛րելի՝ ասեց՝ տեղը ծանր կա՛ց,
Շան փեշակն ա, որ հաչի հանապազ:
Քարով դու շանը ճամփա չե՛ս բերիլ.
Թե չես ուզում նրանց դիա կատաղացնիլ,
Գլխըներս առնի՛նք, գնանք մեր բանը.
Թե չէ քար քցիլն ի՞նչ կօգտի շանը»:—
Իրավ մի քիչ տեղ որ չի հեռացան,
Շներն էլ անսաս քաշվեցին բիրդան:
Բերանը պատռած հայվարա մարդի
Փեշակն է՛ն ա, որ մեզ վրա հաչի:
Բայց դու քու ճամփեն՝ դուզ բռնի, գնա՛,

Կհաչի, կըհաչի, էլ եդ կդինչանա: